


# Ի դեպ



Բաց համակ

5

3

Դէղի Մեծ ՓոխԱբերոյի Թիւի  
Գրիգոր Պլլանեան  
(Հատուածներ)

11

ՊԱՐՏԻՉԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐ  
Նարինէ Սարգսեան  
(Երկիր կապէջ)

15

ՆԱԽ ԱԳԱՀԸ ԱՊԱ ՄԻՈՒԹԻԻՆԸ  
Գուրգէն Արզումանեան

19

ՅԵՂԱՇՐՋՈՒՄ ՅԵՂԱՇՐՋՄԱՆՑ  
Լենա Թազուրեան

21

ՁՄԵՌ 2007  
Սազօ Արեան

27

ԱԻԱՐՏ  
Մարուշ Երամեան

29

ՆՈՐ ԳՐՔԵՐ  
Ի Դէպ

31

ՍԱՀՄԱՆՆԵՐ  
Յարուսթիւն Պէրպէրեան

Խմբագրեց՝ Էլիզաբեթ Գրիգորեան  
E teb ■ 2354 Pennerton Dr. ■ Glendale, ■ CA 91206  
eteb@earthlink.net ■ www.eteb.com  
© 2007 E teb

~ ԴԷՊԻ ՄԵԾ ՓՈԽԱԲԵՐՈՒԹԻՒՆ ~

(Հատուածներ)

Անկախութիւնը կ'արտադրէ նոր սփիւռք: Անկախութիւնը սփիւռքացման հոլովոյթ մըն է եւ կը բանայ ինքնութեան նոր տազնապ: Ահա ինչ որ նորութիւն է, ինքնատիպ, քանի մը տարուան գերիշխան Հայաստանին, որ նուազ վստահ է, նուազ պատրաստ՝ իր ինքնութիւնը պարտադրելու:

Լրասփիւռներու, տիեզերական հաղորդումներու, տեղեկութեան «թեքնաբանութեան» ու բանակարգումին ալիքներն ու պատկերները կ'անցնին սահմաններէն ու լեռներէն: Նախկին, քիչ թէ շատ պահպանուած գաւառը, որ իբրեւ միակ Ուրիշ կը ճանչնար միայն Իշխողը, Իշխողը իբրեւ օտար, հիմա դէմ յանդիման կը գտնուի արեւմտեան օտարին հետ, ամէն կողմէ խուժող, եւ որուն առջեւ կը թուի անպաշտպան: Միամակարդակացման ալիք՝ որ ամէն օր քիչ մը աւելի կը թափանցէ ամէն տեղ բանակարգումի խցիկներէն: Փորձութիւն է անշուշտ փակուելը ինքն իր վրայ, արեան, հողի, իւրայատուկ պատմութեան մը առասպելին: Ազգային գաղափարախօսութիւնը ինքնութեան մը պահպանումին զօրակոչը կը հնչեցնէ: Սահմանը կ'ուզէ ըլլալ կէս-բաց

կէս-գոց: Անկախութիւնը, գերիշխանութեան երազը կամ պատրանքը (որովհետեւ գերիշխանութիւնը շատ համեմատական է իրողապէս, թէեւ գաղափարախօսականօրէն կը թուի բացարձակ) առասպելը կը բանին ներսէն, կը սփռին դուրսը ներս: Նոր սփիւռքներ՝ ներսը: Արդիական պետութիւնները սփիւռքներ կ'արտադրեն:

Հո՞ս է գաղտնիքը սփիւռքի «փրկութեան»:

\*

Եկած եմ հեռուէն, խօսելու համար հեռուէն եւ պահպանել այս դրսութիւնը հեռուին. այլապէս որեւէ մօտեցում կը դառնայ անհնար: Սիրելը միաձուլումը չէ ետերու, այլեւ տարբերութեան ներգրաւումը:

\*

Քառորդ դար առաջ եկած եմ այստեղ, ճիշդ այստեղ, Իսահակեանի այգին: Հիմա, արձանին առջեւ, խումբ մը տղաք մունջ կը պարեն, մինչ կը լսուի կրկնողական երաժշտութիւն մը: Յանկարծ բարձրախօսէն մաքուր արեւմտահայերէն խօսող աղջկան մը ձայնը կը յայտնուի. «Մեր յարբերութիւնը Յիսուսի հետ անմիջական է...», կը յայտարարէ կարճ հասակով աղջիկը: Շուրջը հաւաքուած բազմութիւնը կը դիտէ լրջութեամբ թատերական ներկայացումը: Ոստիկանական կառքէ մը վար կ'իջնեն քանի մը ոստիկաններ, երիտասարդ, դեղին

պեխով տղաք, դանդաղօրէն կը մօտենան մարդոց, աղջկան, կը հարցաքննեն, երաժշտութիւնը պահ մը կը շարունակուի, եւ կարաւանը Աբու Լալայի հեռուն կը հնչեցնէ իր ուղտերուն զանգակները:

\*

Ճիշդ այստեղ, թերեւս նաեւ այլ տեղ, այսինքն՝ ամէն տեղ, անդրադարձեր եմ ատենին որ չեմ կրնար նոյնանալ փողոցէն անցնող ոչ մէկ անցորդի հետ, այստեղ բնակող ոչ մէկ բարեկամի, չեմ կրնար կեղծել կարօտի զգացում, կամ ընել հայրենասիրական ճառ, ինչպէս կ'ընէին այն ատեն վերապատրաստման համար հոս հրաւիրուած ուսուցիչներ ու քաղաքական գործիչներ: Չեմ կրնար ինքզինքս տեղաւորել շուկայի դռներուն առջեւ խոնոկոկ ամբոյն մէջ, թատերասրահի հանդիսատեսներուն, երաժիշտներուն կամ հեռատեսիլի խրջիկէն ընտրական ծրագիր ներկայացնող կուսակցականին: Ինքզինքս կը զգամ ոչ միայն օտար այլ հարազատ այս բոլորին, ոչ միայն հարազատ այլեւ օտար: Ո՛չ թէ կիսուած եմ, այլ կը պատկանիմ օտար հարազատութեան մը:

\*

Այն ատեն, օր մը, կարծեմ Վանաձորի մէջ, գրեր եմ քանի մը տող որ ո՛չ մէկ տեղ կըրցայ տեղաւորել. չունե-

ցաւ ան: Կը նայէի Մասիսներուն մէջտեղ փայլատակող արեւուն եւ ենթարկուեր էի դրդուամի մը ներքին.

«եղայ  
արեւ խուժող իր նախկին կեղրոնին  
եւ խուժող դուրս իր կեղրոնէն,  
կեղրոնն էր դուրս... կերաւ  
կարօտը զինք»

\*

Բոլոր բաժնուածները կրնան հոս հանդիպիլ, բայց երբեք միանալու համար:

Ամբողջ դասակարգ մը կայ մարդոց որոնց համար միակ ապրուելիք տեղը Հայաստանն է, որուն անունը իրենց բերնին մէջ կը հնչէ առասպելին բոլոր հմայքներով: Ներգաղթողներու այս նոր շերտը, երբեմն բարձրագոյն պաշտօններու վրայ, երբ կը հանդիպի քեզի, կ'ողջագուրուի, ուրախ է հանդիպած ըլլալուն համար: Բայց այդքան: Ո՛չ մէկ մտերիմ նրբերանգ ձայնին մէջ: Ասոնցմէ մին հին բարեկամ մըն է, նախկին կուսակցական մը, գրեթէ դասընկեր մը: Տեսակ մը քնարական գեղումով մը, որ աւելի ինքնարդարացումի կը նմանի քան պատճառաբանուած ճառի, կը թելադրէ ինծի որ բոլոր սեփիւռքահայերը հիւանդներ են, հոգեբանական պարագաներ, ամուլներ ու կրտուածներ, թէ գոր-

ծոռնէութեան միակ հեռանկարը այստեղ է, մայր հողին վրայ. բերնին մէջ այս վերջին դարձուածքը տարօրինակ կը հնչէ, բայց կ'արձանագրեմ: Իր նախկին կուսակցական պատկանելիութիւնը ամբողջովին ներկայ է իր յայտարարութեան մէջ, այն որ պահպաներ է հողին առասպելը: Կը յիշեմ մեր գաղափարախօսական գրողներէն ումանց խօսքերը որոնք ապրելով հանդերձ օտար ու լարձուն մայթերու վրայ Սփիւռքի իրենց ու մեր կեցութիւնը վերածեր էին նսեմաստանի, գերեզմանոցի եւ կորստեան վայրի:

Որոշ, թերեւս միայն մակերեսային պարկեշտութեամբ մը բարեկամս խօսքէն անցած է գործի: Վերադարձեր է հող, պահելով հանդերձ իր ծննդեան երկրին անցագիրը եւ կը վճարուի տարադրամով: Երկար խոստովանութիւն-արդարացումի մը մէջ կը մխրձուի, կը փորձէ անպայման իր ներկան հաշտեցնել մեր անցեալին: Մտիկ կ'ընեմ ոչ թէ ըսածը այլ անոր մէջ պահուած արհամարհանքը, ըսել կ'ուզեմ հոգեբանական գետինը: Ինչ որ իր մօտ կը թուի քաղաքական ասպարէզի մը ընտրութիւնը, խորքին մէջ անձնական բարդ պատմութեան մը արդիւնքն է: Ամլութիւնը որ կը դատապարտէ արդարացի կերպով իրն է միայն: Զանց կ'առնեմ իրեն յիշեցնելու որ ի վերջոյ ինք ալ ուրիշներուն

նման արտադրութիւնն է իր արհամարած Սփիւռքին: Ոչինչ այնքան կը թուի արգահատելի ու ողորմելի որքան այս անգիտակից ինքնահերքումը եւ անկէ բխող աղարտանքը, déniement: Ճերմակէն սեւին, կարմիրէն նարնջագոյնին, աղտոտէն մաքուրին անցնիլը բնականոն երեւոյթ մը կարելի է նկատել, բայց փութկոտութիւնը, ջանքը նախկինը ջնջելու, ճշմարտութեան հասած ըլլալու եւ գայն իւրացնելու փառքն ու յաւակնութիւնը, մշտապէս պնդելու իր իսկ կեցուածքը հաւատարմութեան մը վրայ ինքն իրեն, ահա այս բոլորը կը թարգմանեն մաղձ մը, պղտոր, անորակելի, ըմբոստութիւն մը հօր մը դէմ որ երբեք հոն չէր ուր ըլլալու էր, ներքին խարդախում մը: Այս բոլորին քաղաքական գործօնի վերածուիլը, պաշտօնական գաղափարախօսութիւն դառնալը կը կազմեն իմաստակութիւն, կամ գուցէ, նկատի առած մեր անցեալ բարեկամութիւնը, պարզապէս հոգեկան աղքատութեան փաստ:

\*

Ուրիշ խոմբ մըն ալ կայ մարդոց, որոնք յուսախար են առահասարակ, չես զիտեր ինչ է՞, գուցէ խտեպէն եւ կծկուած՝ իրենք իրենց մորթին մէջ: Երկրաշարժի օրերէն մինչեւ անցեալ տարուան իրադարձութիւնները խանդավառ էին Հայաստանով, այդ էր որ կը հոլովէին

անդադար, օրն ի բուն: Անիկա անհրաժեշտ utopie մըն էր, առանց անոր կարելի չէր ապրիլ: Հոս կը վաստակէին, հոն կ'ուզէին ապրիլ: Տարիներ առաջ կը յիշեմ ընկերուհի մը, որ համայնավար վարչակարգին մօտիկ էր եւ ասոր թոյլատուութեամբ ամէն ամառ ամիս մը «Թթուածին կը շնչէր» Երեւան: Վարչակարգին անկումով թթուածինը սպառեցաւ: Ա՛լ չի ճամբորդեր: Յուսախար է միւսներուն պէս: Իտիալը հիմա մերկ է: Դժուար է, կ'ենթադրեմ, ստանձնել անօթի, սովեալ ու սովի մէջ պահուող ժողովուրդ մը:

\*

Ապրիլը հոս հրաշք մըն է, ինչպէս աշխատանքը: Եւ այդ հրաշքը կը յայտնուի անմիջապէս որ կարենաս կաշառել: Իսկ կաշառելը պարտիս խոնարհել բոլոր դէմքերով եւ բոլոր ժամանակներով:

\*

Ամէն մարդ անտեսուած մըն է, իբրեւ տաղանդ, մոռացուած հանճար, մա՛նաւանդ երբ մտաւորականի պէս մէկն է, միշտ հալածուած նաեւ: Նարկիսականութիւն եւ հալածախտ միասին: Եւ ուրեմն՝ միշտ ալ բամբասանք: Ե՛ս, ես միայն լաւն եմ, ես իմանում եմ, միւսները ի՛նչ են որ, ոչնչութիւններ, եւ անոնք են որ գիս չեն հանդուրժեր ու կը հալածեն: Ահա՛ւասիկ:

\*

Յաճախ կը լսեմ՝ իմանում եմ, գիտեմ, ունենք, մենք էլ ունենք: Քիչ կամ բնաւ չեմ լսեր՝ չեմ գիտեր, բացի այն պարագայէն երբ խօսակիցդ չ'ուզեր հարցումիդ պատասխանել եւ անգէտ կը ձեւանայ: Ասկէ գատ՝ միշտ՝ միշտ իմանում եմ կ'իշխէ: Իսկ եթէ անուշադրութեան պահու մը՝ ելլես ըսես որ չես իմանում, որ չեմ գիտեր, ո՞նց թէ չես իմանում, այ մարդ, ո՞նց թէ: Յանկերգը: Սովետական շրջանի մտայնութիւն՝ երբ կապիտալիզմի բաղադատած սոսիալիզմը պիտի անդադար հաստատէր որ ինքն ալ ունէր, ինքն ալ կարող էր, ինքն ալ... կար: Բայց աշխարհի այս հեռաւոր գաւառին մէջ, աշխարհի ամենէն անբեր, ապերախտ ու կոխտուած երկրին մէջ, գիտոսիկութիւնը պաշտպանութեան ձեւ մըն է: Կը միտի ծածկելու հիմնական չիմացութիւն մը: Քիչեր պիտի համարձակին ընդունելու որ գիտեն թէ չեն իմանում: Չգիտնալը, չունենալը ամօթ կամ յանցանք չէ, ի հարկէ: Հակառակը յայտարարելը կը մատնէ մտքի տհասութիւն մը, մանաւանդ այն մակարդակին որ պիտի կոչեմ մտաւորակադեմական:

Գրիգոր Պըլտեան

Արտաստուած «Դէպի մեծ փոխաբերութիւն»էն, Փարիզ 1999:

## ՊԱՐՏԻՉԱՆԱԿԱՆ ԽԱՂԵՐ

*Արդեն տեղեկացրել ենք, թե ինչ բուռն ու ոգելորուած արծազանգների են արժանանում միջոցառումները, որոնք անց են կացում Հայաստանի տարին Ֆրանսիայում մեծամասշտաբ ակցիայի շրջանակներում: Բայց հայա-ճանաչութեան իմաստով իսկապէս աննախադէպ այս ակցիայի մէջ փոքր-ինչ յետին պլան է մղուած հայ գրականութիւնն ու հայ գրողը: Ի տարբերութիւն այլ արուեստների, գրականութիւնը ներկայացնելու մի կարելոր դժուարութիւն ունի՝ լեզուի խնդիրը: Ուստի անհրաժեշտ էր անելի լուրջ եւ անելի հանգամանակից վերաբերմունք դրսեւորել այս հարցի նկատմամբ: Մեր գրույցը ՀԳՄ նախագահ Լեւոն Անանեանի հետ այս խնդրին է վերաբերում եւ յատկապէս հայ գրողների շրջանում հնչող բազմաթիւ դժգոհութիւններին:*

- Պրն Անանեան, ինչի՞ց էք դժգոհ: Խօսքը միայն Ձեզ չի վերաբերում, այլ առհասարակ հայաստանցի գրողին:
- Եթէ պիտի հայ գրականութեան օրեր լինեն, եւ Ֆրանսիայում պիտի ներկայացուի հայ գրականութիւնը, ուզում է որեւէ մէկը դա ընդունել, թէ չէ, բայց առանց Հայաստանի գրողների միութեան՝ ուղղակի սխալ ու անհարկի է դա անելը: Բայց պարզում է, որ էմիսարները այնտեղից մարդիկ են ուղարկում, այստեղ են գալիս, չեն մտնում անգամ գրողների միութիւն, իրենց ճաշակի, նկարագրերի, ծանօթ շրջանակների հետ են միայն առնչում: Չգիտես՝ ի՞նչ յանձնաժողով է գործում Ֆրանսիայում: Մեր այսօրուայ գրականութիւնը չի կարելի ներկայացնել խիստ անձնաւորուած, անհատականացուած վիճակով: Երբ հրատարակչական ծրագրերը ներկայացուեցին, ես ուղիղ դիմեցի

ՀՀ նախագահի աշխատակազմ, Վիգէն Սարգսեանին, ով համակարգում է մշակութային մեծ ձեռնարկը, եւ տեղեկացրի, որ մեզ ուղարկուած ծրագիրը չի համապատասխանում հայ գրականութեան այսօրուայ իրողութեանը եւ անցեալի պատկերացումներին:

- Կուզէի՝ անուններ տաք: Ո՞ւմ նկատի ունէիք, որ գալիս են Ֆրանսիայից եւ գրողների միութիւն չեն մտնում:
- Էմիսարը Գրիգոր Պըլտեանն է: Գալիս է, պարտիզանական վարքագիծ դրսեւորում, հանդիպում իր նախընտրած ինչ-որ մարդկանց հետ: Արդիւնքում գրողների միութիւնը դրուել է խաղից դուրս վիճակում: Սա հանգեցրել է մի բանի. հայ գրականութեան մասին խեղաթիւրուած պատկերացում ենք տալիս օտարներին: Հրաւիրում են մարդիկ, ովքեր ամենեւին կապ չունեն մեր այսօրուայ գրական պրոցեսների հետ: Անգամ Ալեքսանդր Թոփչեանը, որ Ֆրանսիայում է բնակւում, նոյնպէս մեկուսացւած է, եւ անում են՝ ինչ ուզում են: Ստացում է, որ հայ ժամանակակից գրականութիւնը Ֆրանսիայում ներկայացնում են նրանք, ովքեր իրենք ծանօթ չեն հայ ժամանակակից գրականութեանը: Միակ սփոփիչ բանն այն է, որ մենք ֆրանսերէնով հրատարակեցինք ժողովածու, որում հիմնական մասով մեր գրականութիւնն իր լավագույն կողմերով է ներկայացուած:

- Աւելի շատ կազմակերպութիւնը՝ գրողների միութիւնը անտեսելու համա՞ր էք վիրաւորուած, թէ՞ հայ գրակա-

նութեան ոչ պատշաճ ներկայացման:

- Երկրորդը առաջինի հետեւանքն է: Չնչին բացառութիւններով, հայ ժամանակակից ամբողջ գրական ներուժը ներկայացուած է գրողների միութեան կազմում: Այսինքն՝ ցանկացած բանական քայլ պիտի այստեղ բերեր, մինչդեռ այդպէս չէ: Ցաւում են, որ սա սպառնում է աւանդոյթ դառնալ: Ռուսաստանում Հայաստանի տարուայ շրջանակներում էլ գրողն ու գրականութիւնը երկրորդ պլան էին մղուած: Ինքներս, մեր ուժերով անցկացրինք հայ գրականութեան օրեր Մոսկուայում եւ Յարոսլաւլում: Ռա, հաւատացնում են, լաւագոյն միջոցառումն էր ողջ տարուայ ընթացքում, վկան՝ ռուսական մամուլում սփռուած արձագանգները: Ցաւօք, աւանդոյթ է դառնում եղած արժեքները ժխտելը՝ իբր նորը ստեղծելու համար:

- Կարծեն, մէկ այլ բողոքի տակ էլ ստորագրել էինք:

- Այո: մենք ստորագրեցինք նաեւ այն դիմումի տակ, որում ասուած էր, թէ չի կարելի Մատենադարանի մեր գանձերն այդքան մեծ քանակութեամբ տեղափոխել այլ երկիր:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ ինչ ասես՝ չի կարող պատահել: Ինքնաթիռի աղետից սկսած մինչեւ գողութիւն եւ այլն: Մենք համոզուած էինք, որ աւելի ճիշդ էր պատճենները տանելը:

- Ֆրանսիա մեկնած եւ մեկնելիք պատուիրակութիւններում գրողի ներկայութիւնը աւելի շատ գրողի՞ն է պէտք,

գրականութեա՞նը, թէ՞ Հայաստանին:

- Այդ շքախմբերում անպայման գրողը պիտի լինի, որովհետեւ գրողի անդրադարձը բազմապատիկ է լինում: Նա պիտի գրի, վաւերագրի, մատուցի սերունդներին: Պահանջիկ լրագրութիւնը, հեռուստառեպորտաժը անցնում, գնում են, մոռացւում են:

- Բոլոր այս միջոցառումներին հետեւելով՝ գրողն իրեն զգում է մի անկիւն քշուած: Այդպէս չէ՞:

- Քանի դեռ մեր երկիրը չի առաջնորդուի այն գիտակցութեամբ, որ մեր մշակոյթը, մեր գրականութիւնը առաջին պլանում պիտի լինի, որ դրանով պիտի ներկայանանք ու ճանաչելի դառնանք, միշտ էլ վիճակն այսպիսին կլինի:

**Նարինէ Սարգսեան**

---

Մէջբերուած «Երկիր» կայքէջէն: 2 Մարտ 2007:

~ ՆԱԽ ԱԳԱՀԸ ԱՊԱ ՄԻՈՒԹԻՒՆԸ ~

Այս անգամուայ ստացածս համացանցային յղումի բովանդակութիւնը ոչ միայն միջակութիւն է միւս յղումների բովանդակութեան նման, այլ կարելի է ասել նուաստացումի ճախող փորձ է մտածող մի անձի նրկատմամբ, որի ըմբռնումները եւ էութիւնը ամենախօսուն կերպով ինչքան վէտվէտուն, նոյնչափ փոթորկալի, ալիքների պէս տարածուած են եռեսուն տարիներից անցնող նոր եւ դեռեւս նորոգուող ծով մի գրականութեան վրայ, որի ջրերի մէջ նավարկելը, ըստ երեւոյթի նախագահների գործը չէ:

Յղումը առաջնորդում է «Երկիր» կայքէջ՝ ՀՅԴ Հայաստանի գերագոյն մարմնի համացանցային պաշտօնաթերթը, ուր Մարտ 2 թուակիր հարցազրոյցով, Նարինէ Սարգսեանը դիմում է Հայաստանի գրողների միութեան նախագահ Լեւոն Անանեանին, որպէսզի վերջինս իբր թէ մեկնաբանի ինչու հայաստանի գրողները դժգոհ են Ֆրանսիայում կատարուած կամ կատարուող Հայաստանի տարի տօնակատարութիւնից: Սա բուն հարցն է, սակայն այս բուն հարցի մէջ բոյն են դրել այնքան անպատասխանատու, անարհեստավարժ, ինչպէս եւ անմշակ հարցեր ու պատասխաններ, որոնց ընկալման համար լեզուաբան կամ հոգեբան լինելը չի բաւի, ինչ մնաց մահկանացու ընթերցող: Քանի որ նման գրու-

թեան հետ գործ ունենք, ուրեմն պարտաւոր ենք մասամբ առաջնորդուել ենթադրութիւններով:

Ենթադրելի է Նարինէ Սարգսեանը թղթակից է, անկախաբար կամ «Երկիր» շաբաթաթերթի համար աշխատող, ենթադրելի է Լեւոն Անանեանը նախագահ է, ոչ թէ միութեան, այլ մի շարք գրողների նախագահ, որ փափագում է իր տէրութիւնը ծաւալելով դառնալ համայն հայ գրողների նախագահը. «...հայ ժամանակակից ամբողջ գրական ներուժը ներկայացուած է գրողների միութեան կազմում», նաեւ ենթադրելի է որ, «Երկիր» շաբաթաթերթը համաձայն է հարցազրոյցում արժարժուած կարծիքների հետ, այլապէս որպէս կուսակցական կամ քաղաքական խոհեմ պարբերաթերթ կը մերժէր անստոյգ այդ հարցազրոյցի հրատարակումը, նուազագոյնը որեւէ խմբագրական բացատրականով դիրք կը որոշէր, արդ, հարցազրոյցը, պատասխանողը, եւ հրատարակողը արդեօք գիտակից են թէ ի՞նչ է նշանակում Էմիսար բառը, եւ արդեօք պատրաստ են դատարանում ապացուցելու որ Գրիգոր Պըլտեանը էմիսար է, քանի որ ինչքան գիտեմ նման ամբաստանութիւնները միայն քննարկուում են դատարաններում, առնուազն ժողովրդավարական երկրների մէջ:

Ստուգելով բառը պարզում է «էմիսար» նշանակում է գաղտնի քաղաքական յանձնառութեամբ այլ երկիր ուղարկուած անձ, թերեւս լրտես, ուրեմն, Հայաս-



տանի գրողների միութեան նախագահ Լեւոն Անան-  
եանը, ոչ միայն մտածում է Գրիգոր Պըլտեանը  
գաղտնի քաղաքական յանձնառութեամբ է հայաս-  
տան ուղարկուել, այլ նաեւ համոզուած է որ «Պայիս  
է, պարտիզանական վարքագիծ դրսեւորում, հան-  
դիպում իր նախընտրած ինչ-որ մարդկանց հետ:  
Արդիւնքում գրողների միութիւնը դրվել է խաղից  
դուրս վիճակում»: Նախագահի գործածած պար-  
տիզանական բառը հարցադրողին դիւր գալով, փոխ  
է առել, եւ հարցադրոյցը խորագրել է «Պարտիզա-  
նական խաղեր»: Թղթակիցին վայել ի՛նչ անկողմնա-  
կալութիւն, ի՛նչ խեղկատակութիւն, եւ յետոյ ի՛նչ  
հասկանալ, որ խաղի ղեկավարը Գրիգոր Պըլտեանն  
է՞, թերեւս, բայց ոչ այն խաղի, որ նախագահն ու իր  
չըջապատի մարդիկ են խաղում:

Տարօրինակ է, մարդ ոչ պաշտօնական հրա-  
ւէրով, իր միջոցներով Հայաստան այցելի եւ մեղա-  
դրուի որպէս լրտես, մեղադրուի որպէս պարտի-  
զան, մեղադրուի որ հանդիպել է ինչ որ մարդկանց,  
մեղադրուի որ այդ հանդիպումների հետեւանքով  
գրողների միութիւնը խաղից դուրս է դրուել, մեղա-  
դրուի որ գրողների միութիւնն չի այցելել, մեղա-  
դրուի որ Ֆրանսիայի ինչ յանձնաժողովների մէջ է,  
մեղադրուի որպէս մեկուսացնող, մեղադրուի որ  
հայ գրականութեան մասին օտարներին խեղա-

թիւրուած պատկերացում է տուել, մեղադրուի որ ժամ-  
անակակից գրականութեան ծանօթ չէ, բոլորն էլ ան-  
հիմք, առանց ավացոյցի, մաղձոտ եւ ճեպընթաց:

Ինչպէս որ ականարկում է հարցադրոյցի ընթացքին,  
եթէ ՀՀ նախագահի աշխատակազմի անդամ՝ Վիգէն  
Սարգսեանն է «մշակոյթային մեծ ձեռնարկի» համա-  
կարգողը, ուրիշները ի՞նչով են մեղադրելի որ այս կամ  
այն գրողը մասնակցել կամ չի մասնակցել մեծն ձեռ-  
նարկին:

Ահա հայ գրողին գնահատելու ձեւ, ահա գրողների  
միութեան նախագահ, որ եթէ երկրի նախագահ լինէր,  
մէկը չէր համարձակուի ծպուտ հանել եւ գրականու-  
թիւնը գրաքննութեան ու մտքերի խուզարկման ոսկէ  
դար կապրէր:

**Գուրգէն Արզումանեան**

~ ՅԵՂԱՇՐՁՈՒՄ ՅԵՂԱՇՐՁՄԱՆՑ ~

Կեղերոնի հարց մը կայ, իմացական հարց մը, երեւութապէս անյաղթահարելի, որմէ կախեալ մնացեր են հաւաքական եւ անձնական ինքնութեան, մշակոյթի, պատմութեան, եւ տակաւին ի՛նչ ուրիշ արարներու հէնքը: Կեղերոնի հարցը աննախնթացօրէն ծագման հարցին կապուած է՝ ո՞վ է առաջին իմաստաւորողը, ո՞րն է բունը, ան որ ստեղծագործութեան բանալին բռնելով բըռնած է նաեւ ամէն որոշման իրաւունք, ան որմէ կը բխին ալֆան եւ օմէկան...

Ո՞վ յղացեր է այս կեղերոնի կառուցը, ո՞վ հաստատեր է գայն իբրեւ հեղինակութեան աղբիւր: Ուշա՛դրութիւն. այս հարցադրումն իսկ կեղերոնապաշտ կառուցի տրամաբանութենէն բխող ու անոր խաղին ենթարկուող վիճակ մըն է: Իմաստը իմաստ դառնալու համար լեզուի պէտք ունի (...), եւ լեզուին տրամաբանութիւնն իսկ ամբապնդուած է տէրբային - բային տիրոջ - գործակալին վրայ, որ կը հեղինակէ եւ ապա կ'արտօնէ կեղերոնէն բխող իմաստին գոյացումը, տարածումը, վաճառումը: Առանց «տէրբայ»ին ոչինչ կը գոյանայ, ոչինչ կը շարժի, ոչինչ կը շրջի: Ահա հոս մշակութային բռնատիրութեան ձեւանիշը որ կը բանի ստրկացած եւ ստրկացնող մըտայնութիւններու միջոցաւ:

Ա՛լ ինչո՞ւ այպանել ուրեմն, ի՞նչ օգուտ բարկութիւնը, կամ գարմանքը, նոյնիսկ ձանձրոյթը, երբ կար-

դանք գրութիւններ ինչպէս օրինակ՝ «Պարտիզանական խաղեր» վերնագրով հարցազրոյցը ՀՅԴ «Երկիր» պաշտօնաթերթին մէջ լոյս տեսած համացանցին վրայ:

Երկիրը, այդ կեղերոնը, հայկականութեան աղբիւրը, ուր պահպանուած են ու կ'ուռճանան հայկական լեզուն ու մշակոյթը իրենց կոյս եւ անսպի վիճակին մէջ, հակառակ «էմիսարներ»ու նենգ աշխատանքին որ «պարտիզանական վարքագիծ դրսեւորելով» կը վտանգեն ոչ միայն հայ «գրականութեան պատշաճ ներկայացման» օտարին բեմերուն վրայ, այլ մշակոյթին ապագան իսկ, անտեսելով հայ գրողն ու իր դերը:

Աւելի ճիշդ պիտի չ'լլա՞ր նախադասութիւնը ամբողջացնել եւ ըսել թէ «էմիսարը» *bouc émissaire*ն է հոս, հնամաշ մտաւորական կառուցի մը քառութեան նոխագը: Թէ ոչ՝ ո՞վ պիտի յանդգնէր վճարել գինը այսպիսի անպիտան կեցուածքի մը որ ինքն իր վախճանը կը հրաւիրէ:

\*

Կը պատմեն թէ 1633 թիւին, Հռոմի մէջ, երկար դատաւարութենէ մը ետք, դատապարտեալը, Կալիլէօ Կալիլէյ, ալ յոգնած, կը խոստովանի իր մեղքը ու իր «արեւակեղրոն» տեսութեան անհեթեթութիւնը: Սակայն դատարանէն մեկնած պահուն, ականատեսներ կը լսեն անոր շշուկը՝ *e pure si muove* – եւ սակայն ան կը շրջի...

ԼԵՆԱ ԹԱՊՈՐԵԱՆ

~ ՉՄԵՌ 2007 ~

Ահա եւ ես

Խցանուած գինիի շիշին մէջ՝

Լուռ եմ՝ խելօք:

Փակուղի է առջեւս

Ճանապարհները փակուած են կանուխէն

Ու այրած անիւներու գոլորշին կ'անցնի ուռնագերուս:

Կը սրդողիմ մոխիրին առջեւ:

Կը խնդամ վաստակածիս համար:

Հաշիշի վաճառականները տե՛ս պանդոկներէն տուն

կը դառնան:

Եւ պոռնիկներդ իմ պոռնիկ քաղաքս

Քունի կ'անցնին:

«Գիշերը իմ ազատութիւնս է»,

Կը պատմէ թուրքակ մը եւ կը վազէ ետեւէս

Ես կամուրջին վրայ

Կ'որոնեմ անցեալս...

Այս զգացումները,

18 տարեկանի ճապաղ կարօտներուն չեն նմանիր:

Կը պոռթկամ:

Կը գրոհեմ բառերուն վրայ:

Բառերը կը յարձակին վրաս

Տես քաղաքս...

Ինչքան կը պփգամ քեզմէ...

Ու այնքան կը սիրեմ քեզ:

Կամուրջին տակ երկու բոգեր կը համբուրուին

Վեղարը նետողը թքած ունի խորանիդ վրայ,

Անոր աղօթքը պիտի փչրուի մայթերուդ,

Ինչ հրաշալի յարութիւն քեզի համար...

Դուն խորանի արգանդ ես:

Դուն լոյսի խորան ես:

Քեզի համար միեւնոյնն է Սրբութիւնը

Եւ անէծքը...

Արեան հետքեր կան աչքերուս,

Ու արցունքի կաթիլները չեն հանդիպիր իրարու:

Ականջներս կարմիր են,

Ես ինձմէ կը վանեմ թոյնը եւ դուն պոռնիկ քաղաքս

Ոտքերդ կը բանաս

Որ հաճոյանայ ամբողջ արեւելքը քեզմով...

Կամուրջներդ կը հագան...

Անձրեւդ աղօթք չի բերեր հետը

Ոչ ալ գինիի արիշները

Կը մաքրուին պատերազմի վէրքերէն:

Անսովոր, անսովոր ձմեռ է ասիկա:

Անսովոր ձմեռ, կարապներդ կը շուարին

Ձիւնդ կ'ուշանայ

Անուշ առաւօտներդ կը մատնուին մարումի

Կը մարին ծխնիներու յոյսերը

Կը մարին լոյսերը երկա՛" աաար մայրուղիներուդ վրայ:

Մարդիկ նոր տարի չեն տօներ

Երեխաներդ կը պատուեն նուէրներու տուրիկները

առանց խինդի...

Ամէն կողմէ կը պաշարեն քեզ  
Ու դուն անվայելօրէն որպէս վերջին պոռնիկը սա  
ժամանակին

Կուզես ըլլալ բոլորին հետ...

Անսովոր ձմեռ է ասիկա  
Կ'անցնի առանց ցաւի:  
Գուցէ անցնի:

Ձայներ կու գան ականջիս  
Վառարանը կը ճչայ  
Յետոյ բարի ձայն մը կ'աղմկէ սենեակին մէջ  
Աղմուկի անձրեւ  
Ինչ անսովոր է ձմեռը այս տարի  
Պարտքերս շատ  
Երգերս քիչ  
Ես տխուր եմ այս ձմեռ  
Քայլերս հեռու տեղեր չեն երթար այլեւս  
Ու ես բռներուն հետ կատակ չեմ ըներ առաջուան պէս  
Կեանքս ծանր է, բայց հոյակապ...

Վառարանի ճիչը  
Կը յուզէ փոքր սնապարծուծիւնս  
Անհաւատուծիւնս կ'եռայ  
Ինչ հեթանոս եմ այս ձմեռ,  
Սենեակիս պատերէն  
Եռամեծ քերթողներուն աղօթքը կը հոսի...

Պատին՝ սկուտեղ, վրան նռնենի նկարած  
Կինս հիմա ուր որ է կուգայ  
Միրգեր կը շարէ սկուտեղին  
Ու ես կ'երգեմ իրեն համար  
Ի՛նչ աներգ ձմեռ է այս տարի,  
Ջարմանքով կը կարդամ գրական թերթերը...  
Տող մ'իսկ չկայ իմ մասիս  
Տեղ մը պառաւ մը աներագ բանաստեղծ է կտրեր  
Տեղ մը Տիկին Սիլվան կը գովերգեն...  
է Սիլվան ուրիշ մարդ էր  
Հիմա կը հասկնամ ո՛վ էր Սիլվան,  
Միասին կոնեաք ալ խմեցինք  
Ըսաւ որ բարի կենամ  
Աստին-անդին  
Էնպէս-էսպէս չանեմ  
Բայց ես դրուժանօրէն իր էջերը պատուեցի  
Ներսը իրմէ մակագրուած հատորիկ մը կայ  
Պարսկական մաքուր բանաստեղծութիւն  
Ջարմանքով կը նայիմ հատորին  
Գինիի տեղ ջուր կը խմեմ  
Կը քնանամ  
Առաւօտեան Մահմուտ Տահլանի ձայնով

արթննալու նորէն,

Տեսնեմ Կազայի վէրքէն ինչքան արիւն հոսեցաւ  
Տեսնեմ սատտամը ինչ ըսաւ իրենց  
Տեսնեմ Սատտամիկները ինչ կուզեն նորէն  
Երէկ գիշեր չքնեցի  
Ամբողջ գիշեր Արտեմին գրածները կարդալէն մեռայ,

Ո՛հ ինչ անսովոր է այս ձմեռ,  
Որքան է ի վեր Ալիքեանին պիտ երթամ  
Առաջ վահան կը գրէր  
- Ալիքեանին լաւ նայիր, տղայ  
Նայէ Ալիքեանին պէս ուրիշ չունինք  
Բայց ինչ ըսեմ բախտիս,  
Անոր ճհուտի կինը,  
Գլխուս ոռուս ըլլալ կը ձեւացնէ,  
Զուգեր որ սուրճի երթամ  
Անիծեմ բախտիս  
Ալիքեանը կարօտցեր եմ  
Գորիսէն միւռոն եմ բերեր,  
Թթի արաղ եմ բերեր...  
Կինս երեխայի քիթիկին քսեր է  
Որ յանկարծ կրիսի չընկնի  
Ո՛հ ալիքեանի բանաստեղծութիւնը  
Հին գինիի պէս անապական  
Անարատ արիւն է մէջս  
Մէջս ծղրիթներ կան,  
Փոսուռաներ գունաւոր  
Ու հրեշտակներ կան թեւերուս  
Մեղքերս կը հաշուեն  
Անուններս կը հաշուեն...  
Լաւ որ կինս հրեայ չէ,  
Վերջին օրը այդպէս բաժնուեցանք Աւագէն  
Ականջիս ըսաւ որ ոնց անեմ  
Փասթերնաքն էր Եւրէ  
Շակալն էր Եւրէ  
Ասա Սագ ճան ոնց անեմ...

\* \* \*  
Լաւ որ կինս հրեայ չէ  
Արդէն ծերացած հօրս  
Զեռքէն բռնած անկողին կը տանի  
Պապա ոչինչ վաղը կ'աղէկնաս ըսելով:  
.....  
Սենեակի երաժշտութիւնը կը մաքրէ հոգիս  
վտարանդի-մեղաւոր:  
Հոգիս՝ մեղսակից գրելու անէծքին...  
Ու ես աթոռակին վրայ բազմած,  
Մատներս ուժեղ կը գառնեմ ստեղնաշարին  
Կը հաւաքեմ գալիք ձմեռուան ուրախութիւնները,  
Փայտեր կը հատեմ որ կրակ դնեմ ոգիիս  
Մոմեր կը վառեմ խորանին...  
Ու կ'աղօթեմ  
Որ ձմեռը սպիտակ, վերջ տայ ցաւիս:

Անսովոր ձմեռ, կարապներդ կը շուարին  
Զիւնդ կ'ուշանայ  
Անուշ առաւօտներդ մարին  
Կը մարին յոյսերը ծինիներուն  
Կը մարին յոյսերը երկաս՝ աար մայրուղիներուդ վրայ:

\* \* \*  
Անսովոր ձմեռ է ասիկա  
Կ'անցնի առանց ցաւի:  
Գուցէ անցնի:

Սագո Արեան

Կիրակի իրիկուն:

Հաւաքեց ինքզինք. հազուեցաւ պլու-ճինը, վրայէն քաշեց թի-շըրթը:

Տունը ձգեց անձնաթուղթը՝ ծնողքին անուկով եւ ամուսինին հասցէով,

դրամապանակը, ուր կրնար ըլլալ իր շահած դրամը, բայց որ չէր, ամբողջը կը ծախսուէր տան կարիքներուն, մի՛շտ պարապ ձգելով գայն,

բանալիները տունին, ուր մէկ գաղտնի ու տաք ան-կիւն չկար իրեն համար,

ինքնաշարժին արտօնագիրը, որուն կարիքը չունէր՝ վարելու կարգը իրեն չէր հասներ,

դրամատան քարթը, անոր ալ կարիքը չունէր՝ չէր հասներ հոն բան դնել, որ յետոյ ալ առնէր:

Ձգեց նաեւ ժամացոյցը՝ քունի եւ արթնութեան ժամերը դարձեր էին բնագոյային.

եւ ձգեց ամուսնութեան մատանին:

Դուրս ելաւ ու քաշեց դուռը ետեւէն անձայն ու վերջնական:

Նայեցաւ աջ, նայեցաւ ձախ: Նայիլը ի գուր, որով-հետեւ պողոտան կտրեց առանց սպասելու, որ ինքնա-շարժներուն հոսքը դադրի. գիտէր, որ այդ հոսքը կրնայ բնաւ չդադրիլ: Ինքնաշարժ մը արգելակեց, շարժավար մը հայհոյեց:

Կտրեց պողոտան ու մտաւ դէպի ծով տանող ճամ-բան:

Քալեց առանց անպարանքի, նոյնիսկ քիչ մը ան-տարբեր:

Նայեցաւ արեւին ու պատասխանեց՝ բարով մնաս:

Նայեցաւ աղբահաւաքին ու ժպտեցաւ իր ամենէն հմայիչ ու քաղցր ժպիտով:

Քալեց հաստատ քայլերով մինչեւ ծով: Քայլերուն մէջ իջեցուց մտահոգութիւնները, հոգիին ծանրու-թիւնը, օրերուն անկրելի տաժանքը:

Յետոյ այդ բոլորը ձգեց ոտնահետքերուն մէջ, աւագին վրայ:

Երբ ալիքները քաշուեցան աւագածիրէն, սրբեր տարեր էին բոլորը:

Մարուշ Երամեան

30-7- 89 - 2 - 12 - 06

*~ ՆՈՐ ԳՐՔԵՐ ~*

Բովանդակութեան ցանկը, հապճեպօրէն կարող է գաղափար փոխանցել գրքի արտաքին կառուցուածքի մասին, բայց երբէք ներքին ճարտարապետութեան, ուր աստիճանաբար պիտի յայտնուի խորագրին առաջնորդող նախաձրագրուած կամ բնաւ չձրագրուած հէնքը հիսուացքի, ինչպէս պարագան է Յարութիւն Պերպերեանի վերջերս հրատարակուած «Սահմաններ» բանաստեղծական հատորի, ուր ժողովածոյի տպատրութիւն թողնող բովանդակային վեց յստակ բաժանումներից ու ենթաբաժանումներից անկախ, առկայ է սկզբից վերջ սփռուող հէնքի տարր՝ ոչ միայն որպէս աշխարհագրական սահմաններ, այլ առաւելաբար՝ հոգեբանական:

Անցեալի ու ներկայի, կեանքի ու մահի, հօր եւ որդու, արթնացումի ու մոռացումի, յուշի ու անյուշի սահմանների մէջ տարութեւրուող վիճակները, ինչպէս որ ստորեւ ներկայացուած բանաստեղծութեան վերջին տողում է յայտնուում, դառնում են սահմանազանց, այլ խօսքով՝ անսահման, իր երկու նշանակութիւններով, յատկապէս երբ «քու մէջդ են»:

Նոյնն է պարագան հատորի «Յաւագերծում» բաժնի, որը ամբողջովին հիմնուած է նոյնանուն բանաստեղծութեան վերջին այս նախադասութեան հարցա-

դրումի վրայ՝ *Պարուհակէն դուրս կը նայէր / եւ կը խորհէր - ի՞նչ... Յետագայի երբեմն արձակ, երբեմն չափածոյ հատուածները, այդ հարցումի պատասխանի փնտռուքն են: Թէպէտ բաժինն ու այդ բաժնի մուտքի բանաստեղծութիւնը խորագրուած են «Յաւագերծում», սակայն ընթերցողը ընթերցումի ընթացքին, անսպասելիօրէն կը հանդիպի այս տողին՝ *Յաւագերծում չկայ...* թերեւս այն պատճառով, որ կայ մահ:*

*Ա՞յս է մահը՝  
աւերը մարմնին մէջ,  
միտքը գործածելու կարողութեան,  
կեդրոնացումի, յիշողութեան,  
եւ դանդաղումը շարժման...  
Յաւագերծում չկայ:*

Նոյն տրամաբանութիւնն է, ինչ որ սահմանազանցումը, իսկ միտքը գործածելու կարողութիւնը, հօր յիշողութիւնը, վերադարձում է հատորի առաջին «Անյուշ» քերթուածին, որտեղից ակունքաւորում է «արթնացումի եւ մոռացումի երթեւեկը» եւ սփռում է հատորի տարածքին:

«Սահմաններ»ը Յարութիւն Պերպերեան բանաստեղծական չորրորդ հատորն է, հրատարակուած Երեւան, 2007ին:

**Ի Դէպ**

~ ՄԱՀՄԱՆՆԵՐ ~

Սահմանները քու մէջդ են  
նոյնիսկ եթէ զանցես զանոնք:  
Սահմաններէն  
ասդին ըլլաս եւ կամ անդին՝  
անոնք միշտ կան  
իրենց գիծերով շարժական ...

Անդունդին վրայ  
չուանին քալող լարախաղացին  
նման՝ երբեմն  
զացած ենք խենթ յաճախանքով,  
եւ պիրկ պարանը  
դարձած է փխրուն սահմանագիծը  
մտքի կշռոյթին:

Մէկ-մէկ կանգնած ենք  
աշխարհագրական կամ Փիզիքական  
սահմաններուն դէմ՝  
եւ անդրադարձած մեր միջոցներու  
խիստ սահմանափակ կարելիութեան,-  
կացութիւններ կան, ճշմարտութիւններ,  
որոնց ընթացքին ազդելու համար  
մենք անկարող ենք ...  
Տակաւին լեզուի  
սահմաններուն շուրջ

դեզերած ենք լուռ,  
բախած բառերուն,  
փորձած խուսափիլ  
անոնց դիւթական  
խոր կախարդանքէն:

Սահմանաւորի ու անսահմանի  
անտեսանելի սահմանագծին,  
որքան անհեթեթ ճիգ թափած ենք զուր  
զուցէ այլապէս  
դեռ իմաստալի...

Նաեւ յաճախ օրէնքները ետին ձգած,  
մոռցած ամէն կանոն ու կարգ,  
զուցէ անոնց ճնշումին դէմ  
ընդվզելով,  
եւ կամ ճշգրիտ  
դիրքորոշմամբ, գիտակցօրէն,  
նետուած ենք դուրս սահմաններէն  
անտեսելով մահը նոյնիսկ

այսպէս դարձած՝  
սահմանազանց:

Յարութիւն Պերպլեան